

Please return.



Հրատարակչություն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի
A Publication of the Prelacy of the Armenian Apostolic Church of America

Volume XI, Number 8
December 1988
Supplement

CATASTROPHE IN ARMENIA !
THE WORLD OPENS ITS HEART TO ARMENIA

SECONDS OF DESTRUCTION ...
DECADES OF REHABILITATION

The first chilling reports reached us Wednesday evening. A major earthquake ... in the area of Iran ... Turkey ...

And then the knock-out blow: ARMENIA. MAJOR DISASTER. ONE TOWN HAS DISAPPEARED ... TWO LARGE CITIES DEVASTATED ... TENS OF THOUSANDS DEAD ... HUNDREDS OF THOUSANDS HOMELESS ... CHILDREN TRAPPED IN SCHOOLS ... VOICES FROM THE RUINS HEARD THROUGH THE NIGHT ... TEMPERATURES SUB-ZERO. PLEASE, SEND HELP!

The news would have been devastating to us had it occurred anywhere in the world. The magnitude of the tragedy is beyond comprehension. But, in Armenia? Armenia once again in disaster headlines? Armenian again in need of relief? Armenians again the object of a massive world-wide relief effort? Please, dear Lord, let this be a nightmare from which we will awaken, innocent once more in the warm comfort of our homes.

The nightmare was reality. For every Armenian American the immediate thought was, "What can I do to help?" "Please, don't tell me to send money ... of course I will send money ... that's not enough ... I want to HELP .. I want to become exhausted with work. I want to feel the pain of lifting tons of concrete burying my brothers and sisters."

Each hour the numbers of volunteers increased. The media converged on any Armenian establishment seeking human-interest stories. "Do you have relatives in Armenia?" they would ask over and over again. The reply was the same, "They are all my brothers and sisters. They are all my children. They are all my mothers and fathers."

As we got to press with this special issue of Outreach the exact death toll is not known. It may never be known. The Soviet Union has issued an official count (Cont. page 3)

POPE GRIEVES OVER
EARTHQUAKE VICTIMS

Pope John Paul II expressed his grief today over the devastating earthquake in Armenia.

"In this hour of trial, I am closer than ever to the Armenian people, who are always present in my prayers and my pastoral concerns," John Paul said in remarks from his apartment window on the Roman Catholic Feast of the immaculate Conception.

He told several thousand people gathered in St. Peter's Square that the joy of the day was clouded by the "painful news that continues to arrive from Armenia."

He said he shared in the grief of the suffering and prayed for the Armenian people "in this painful moment of their history."

Italian President Francesco Cossiga sent a message expressing his sorrow to Soviet leader Mikhail S. Gorbachev.

ՄՐՏԻ ԽՕՍՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հինգշաբթի, Դեկտ. 8 երեկոյեան, գտնոււմ ենք Նիւ Եորքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Ծառարում, ուր Բարձր. Տէր Մեսրոպ Արք. Աշնեան՝ Առաջնորդ Հիւսիս-Արեւելեան Միացեալ Նահանգների եւ Քամադայի Կիրիկեան թեմերի, մամուլի ասուլիս ունեցաւ ամերիկեան գլխաւոր հեռուստատեսիլների, ձայնասփիւղների եւ մամուլի թղթակիցների հետ, Հայաստանում պատահած աղետալի երկրաշարժի աղբյուրները:

Սուգի եւ տրտմութեան այս պահերին, Սրբազան Հայրը իր խոր վշտի կսկիծի ընդմիջից իր սրտի խօսքն է յղում հայրենի սիրելի ժողովուրդին ի միտքարանձաւի սփոփանք:

Սիրելի Հարազատներ.

Ձեզ հարազատ կը կոչեմ, բայց որեւէ ատեն այնքան մօտիկ եւ այնքան հեռու չեմ զգացած ձեզմէ. տագնապի, արցունքի, մահուան այս օրերուն Ձեզ կը փնտռենք, ես եւ ինչպէս մեր եկեղեցւոյ բոլոր զաւակները: Որովհետեւ այս ահաւոր երկրաշարժը որ տասնեակ հազարաւոր զոհեր խլեց Լենինականի, Կիրովականի, Սպիտակի շրջաններուն մէջ, ցնցեց մեզ: Խոտոված են մեր հոգիները, ընդվզած ենք, եւ իզուր, ի զուր միտքարանձախներ կը փնտռենք. բայց միայն Աստուծոյ պատգամին մէջ, Անոր Խօսքը յաւիտեական է եւ Անոր խորհուրդներուն չենք կրնար թափանցել: Օրհնեալ ըլլայ Աստուծոյ կամքը: Բայց խնդրենք որ Աստուած հեռու ընէ այսպիսի փորձանք եւ աղէտ մեր ժողովուրդէն: Շատ տեսանք, 15 թիւը տեսանք: Աւելի ուշ, ուրիշ ցաւերու հովիտէն անցանք:

Այս Փետրուարին գարունը բացուեցաւ մեր աշխարհին. Փետրուար 20-ին երբ Երեւանի հրապարակի վրայ հաւաքուած էիք եւ ձեր ձեռքը կ'երկարէիք ձեր փոքր եղբոր Արցախին եւ կ'ուզէիք որ Արցախը Մայր Հայրենիքին միանայ, դուք ձեր այդ արարքով հպարտութիւն ներշնչեցիք մեզի եւ դուք գիտէք թէ ինչքան փոխուեցաք, այլակերպուեցաք, Քաթարսիս ունեցաք եւ երեւան եկաւ նոր Հայր, հպարտ Հայր, մաքրարիւն Հայր, սուրբ զգացումներով, ազնուական նկարագրով Հայր: Շատ տեսաւ աշխարհ, ու յանկարծ այս աղէտը պատահեցաւ եւ տասնեակ հազարներ այսօր հող ու փոշի են: Բայց ինչպէս քիչ առաջ վերը եկեղեցիի մէջ ըսի, վստահ եմ անմիջապէս վերաշինութեան աշխատանքին մէջ էք: Օտար թղթակիցներ հարցուցին, «Դեռ երկարը, ետայարկ, քառայարկ շէնքերը նոր քանդուեցան, դեռ այդ շէնքերը չեն մաքրուած, Սրբազան, եւ դուք վերաշինութեան մասին կը խօսիք:» Ըսի, բնական է ստիկա, որովհետեւ հայ եմ եւ իմ արիւնիս մէջ կայ այդ զգացումը: Եւ գիտեմ որ մեր հայրենի ժողովուրդը պիտի վերաշինէ: Պիտի վերաշինէ Լենինականը, պատմական Գիւմրին, Ալեքսանդրապոլը, այդ անուշ քաղաքը որ այնքան բան պահած էր անցեալէն. պիտի պահէ այդ ժողովրդին սրամտութիւնը, թող Լենինականցին միշտ պայծառ մնայ, սրամիտ մնայ. Կիրովականը՝ հին Ղարաբաղիսէն, մեր պատմութեան հերոսամարտերուն թատերափայլը, պիտի դարձեալ վերաշինուի: Սպիտակը, Համամլուն էր, դուք հագիւ ժամանակ ունեցաք (Շար. էջ 3)



Մայր Հայաստան
Mater Dolorosa

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՉԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս, որ Կիպրոս կը գտնուէր Հայաստանի երկրաշարժի օրը, ցնցուած աղէտէն, անմիջապէս ցաւակցական սրտառուչ հեռագիր մը ուղարկեց Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին, իր եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նիւթական եւ բարոյական միջոցները ղենելով Հայաստանի տրամադրութեան ներքեւ: Բաց աստի, Վեհափառ Հայրապետը կապ հաստատեց Վատիկանի եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին հետ, խնդրելով անոնց անմիջական օժանդակութիւնը: Վեհափառ Հայրապետը Կիրակի 11 Իեկտեմբերի առաւօտեան, հեռաձայնով հետեւեալ պատգամը ուղարկեց ամերիկահայութեան:

«Մամրագոյն վշտով համակուած է մեր սիրտը այս ահաւոր աղէտին դիմաց: Սուգը որքան ալ խոր ըլլայ, չի կրնար ընկնել հայ ժողովուրդի կամքը այս աղէտէն արիաքար դուրս գալու եւ վերականգնելու եւ պատմական կենսուղիի մը հետեւելու կամքը:

Կոչ կ'ուղղեմք մեր բոլոր թեմերու ազգային իշխանութեանց եւ ժողովուրդին, անմիջական օգնութիւն կատարելու, գերագոյն գոհողութեամբ, որպէսզի երկրաշարժէն աղետալ մեր բոյրերն ու եղբայրները իրենց վերքերը դարմանեն եւ յոյսով նային դէպի ապագայ:

Աղօթք երկրաշարժի բազմաազար գոհերու հոգիներու խաղաղութեան համար, ուժ եւ կորով վերապրողներուն, ստեղծագործ կերպով շարունակելու իրենց կեանքը մեր Հայրենիքի գորութեան համար:

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

Լենինական՝ պատմական Շիրակ գաւառի Կու- մայրի քաղաքն է, ծանօթ նաեւ Կիւմրիւ եւ Ալէքսանդրապոլ անուններով, Հայաստանի Հիւսիս Արեւմուտք, Ախուրեան գետի ձախ ափին, ծովի մակերեսէն 1500 մ. բարձր, Երեւանէն 126 քմ. հեռավորութեան վրայ: 3526 հեքթար տարածու- թեամբ եւ 228 հազար բնակչութեամբ Լենինականը Հայաստանի երկրորդ քաղաքն է:

Պատմական հարուստ անցեալի տէր չըլնալ է Լենինականը: Պրոնգի եւ վաղ երկաթէ դարերէն սկսեալ (Ն.Ք. 10-րդ դար), անփոխարինելի աւանդներ հասած են մեզի: Հայ ազատագրական շարժումներու գլխաւոր օրրանը եղած է, սկսեալ Արաբական տիրապետութեան շրջանէն մինչեւ 20-րդ դար: Ռազմական այդ նոյն ոգիով է որ հայրենական մեծ պատերազմին (1941-1945) ութ հազար Լենինականցիներ մասնակցած են, որոնց- մէ երեք հազարը նահատակուած են:

19-րդ դարու սկիզբին, ռուսական զօրքի գրաւումէն ետք, իր ռազմագիտական դերքի կարեւորութեամբ, ինչպէս նաեւ առեւտրական եւ երկաթուղային գծերու գլխաւոր հանգոյց ըլլալու հանգամանքով, Լենինական նկատուած է Հայաստանի կարեւորագոյն քաղաքներէն մին:

Մայր եկեղեցին՝ Ս. Փրկիչը կառուցուած է Անիի Մայր Տաճարի օրինակով: Ծարտարապետին հոգին Անիի հազար ու մէկ եկեղեցիներու փառքի կարօտով ճենճերած, եւ անցեալի այդ փառքը վերականգնելու նախանձախնդրութենէ մղուած, Անիի Մայր Տաճարը վերամարմնաւորած է Ս. Փրկիչով: Այս մասին Ա. Իսահակեան հետեւեալը կը վկայէ՝ «Կիւմրիւի որմնագիր վարպետները Անիի աշակերտներն են, անտեսանելի, անանուն, անունները մոռցուած վարպետներու աշակերտներ, որոնք դիտելով մանուկ օրերէն Անիի շէնքերն ու աւերակները, առած են անոնց արուեստը, արուեստի գաղտնիքները»:



Եկեղեցւոյ կառուցման վարպետաց վարպետը եղած է Թադէոս Անտիկեանը: Փայտի աշխատանք- ները դիկավարած է վարպետ Մամուկ Պետրոսեանը, որ եկեղեցւոյ վեցփեանց խաչը հնարամտօրէն վեր բարձրացնելու եւ Մայր գմբէթին ծայրը ամրա- ցնելու համար, ժողովուրդէն ստացած է «Արդար Մամուկ» անունը: 1926-ի կործանարար երկրաշարժը չկրցաւ կայտարական գեղեցկութեամբ այս տանարը վնասել: 1988-ի երկրաշարժին ... նոյն ցակատա- գիրը վերապահուեցա՞ւ ...

OUTREACH

Archbishop Mesrob Ashjian  
Prelate  
Mardo Soghomian - Editor

OUTREACH (USPS 426-490) is published monthly by the Prelacy of the Armenian Apostolic Church of America, 138 East 39th Street, New York, New York 10016, (212) 689-7810. Unsolicited manuscript will be considered for publication; please include a stamped, self-addressed return envelope. We reserve the right to edit articles in order to conform to space limitations. Signed articles do not necessarily reflect the policy of the Armenian Apostolic Church of America. Send all correspondence to the above address to the attention of the Editor. Printed in the United States of America, Second class postage paid at New York, N.Y. 10016. Postmaster: Send address changes to Outreach, 138 E. 39th St. New York, N.Y. 10016

Քաղաքը ունեցած է եռուն կեանք մը, հոգեւոր, մտաւոր, ընկերային, արուեստի, մարզական եւ արդիւնաբերական բազմազան մարզերու մէջ: 1876 թ. հաստատուած է առաջին տպարանը: 1901 թ. լոյս տեսած է առաջին գրական հանդէսը՝ «Էմինեան Ազգագրական Հանդէս» անուամբ: 1912 թ. առաջին անգամ բեմադրուած է՝ Ա. Տիգրանեանի «Անուշ» օբերան:

Մինչեւ ընթացիկ տարւոյս Դեկտեմբեր վեցը, Լենինական ունէր Ս. Փրկիչ, Ս. Աստուածածին, Ս. Նշան, Ս. Գեորգ եկեղեցիները, 126 դպրոցներ, 31 գրադարաններ, 21 հիւանդանոցներ, անհամար մշակութի կեդրոններ, եւ յուշարձաններ: ան կ'արտադրէր Հայաստանի արդիւնաբերման ութը առ հարիւր տոկոսը:

Լենինականցիին ի բնէ ունեցած է արհեստը արուեստին ընդելուզելու եւ միաձուլելու իւրայատուկ շնորհքը: Ծարտարապետութիւնը, փայտագործութիւնը, արծաթագործութիւնը, ոսկերչութիւնը, պղնձագործութիւնը, գորգա- գործութիւնը, ժանեակագործութիւնը, այս բոլորը հասցուցած է արուեստի մակարդակին: ՍՍՀՄ ժողովուրդական նկարիչ Ս. Մերկուրովի պատանեկան յուշերէն փրցուած սա պատմաբանը, լաւագոյն վկան կը հանդիսանայ այս ոգիին. «Տուն մը կը շինէինք: Տանտէրը ուզեց որ մուտքի կամարին աղաւնի մը քանդակուի: Վարպետս գործը ինծի յանձնեց եւ ես աղաւնին քանդակեցի կարմիր քարի վրայ եւ տարի իրեն: Երկար նայելէ ետք աղաւնիին, վարպետս աղաւնին նետեց եւ փշուր փշուր ըրաւ, գոչելով. — «Այս ի՞նչ շինած ես, բան մը չինէ, իրաւ բան մը»: Այս նոյն տեսարանը կրկնուեցաւ մի քանի անգամ, եւ երբ վերջաւորու- թեան վարպետիս հարցուցի թէ ինչու՞ գործս չէր հաւնեւ, ան պատասխանեց՝ «տղա՛ս, աղաւնին այնպէս մը պէտք է քանդակես, որ տեսնողը պէտք է կարծէ կամ երկինքէն նոր իջած է, եւ կամ՝ երկինք պիտի թռչի»:

Լենինականը Հայ ժողովուրդին տուած է ան- մահանուն մտաւորականներ՝ Աւետիք Իսահակեան, Աթաբէկ Խնկոյեան (Խնկո Ախպէր), Գ. Լեւոնեան. նաեւ Գուսաններ՝ Ջիւանին ու Շերամը, ինչպէս նաեւ Միջազգային Ողիմպիական խաղերու թափնեկիրներ՝ Վ. Մելիտոսեանը, Եուրի Վարդա- նեանը, եւ մանաւանդ ... զուարճալի պատմու- թեանց հերոսներ՝ Պողոս Մկուչ եւ Օննիկ:

Լենինականը Մայր Հայաստանի ժպիտն էր. իր աներթոտներով կը քաղցրացնէր Հայ մարդու առօրեան: Դեկտ. 7-ի աղէտը եկաւ խլելու այդ ժպիտը հայ կեանքէն: Վստահ ենք որ Մփիւռքասյալը, գործակցութեամբ Հայրենի ժողովուրդին թոյլ պիտի չտայ որ ժպիտի այդ աղբիւրը ցամաքի, այլ ընդհակառակը՝ վերածաղկի, դալարի եւ սփռուի մինչեւ Երեւան-Ղարաբաղ, մինչեւ Մուշ ու Վան եւ մինչեւ Փարիզ, Նիւ Եորք-Քալիֆորնիա:

EARTHQUAKES IN ARMENIA

Three major seismic faults converge under the land mass of Armenia, as a result of which earthquakes have plagued our fatherland for centuries, often with catastrophic results.

Here is a list of a few of the major earthquakes which hit Armenia in the last 1300 years:

- 735 A.D. — Vayots Tsor region, destroying the city of Mok with 10,000 victims.
- 893 A.D. — Destruction of the once capital of Dvin 1011 to 1784 — 10 separate earthquakes have severely damaged the city of Eriza (Erzinka).
- 7th to 18th Centuries — Multiple earthquakes in Moush & Van areas.
- 735 A.D. — In Vayots Tsor area, the city of Moz was totally destroyed and 10,000 people died.
- 1045, 1132-1319 — Ani, the capital city of Medieval Armenia was hit.
- 1308, 1931, 1968 — Zangezour Area, major earth- quake. The Datev Monastery was destroyed.
- 1679 — The earthquake destroyed the pagan temple of Garni.
- 1840 — Major earthquake of Mount Ararat, the village of Agory, on the slopes of the mountain was totally destroyed.
- 1859 — 3000 homes were destroyed in Erzeroum and Pasen.
- 1924 — 60 villages in Erzeroum and Pasen were destroyed.
- 1926 — An earthquake hit Leninakan on 22-23 October.
- 1939 — On December 22-27, 30,000 houses were destroyed and 20 to 30 thousand people perished.

ՍՊԻՏԱԿ

Մինչեւ 1949 թուական, Սպիտակ գիւղը կը կոչուէր Համամլու: Կը գտնուի Բամպակ գետի եւ անոր Ջրաչէն վտակի ափերուն: Սպիտակ գիւղէն կ'անցնին Երեւան-Թիֆլիս երկաթուղին եւ Կիրովական-Երեւան, Կիրովական-Լենինական ինքնաշարժի ճամբաները: Երեւանէն 100 քմ. հեռավորութիւն ունի: Կլիման բարեխառն է, մեղմ, ձիւնառատ ձմեռով: Բնակելի գօտիները տեղադրու- ուած են Բամպակ գետի ճորի Հիւսասային եւ Հարաւային տարածքին վրայ: Գիւղը ունի դպրոց- ներ, եկեղեցիներ որոնցմէ Ս. Աստուածածինը, կառուցուած է 1883-ին Համամլուի նոր անուանումը՝ Սպիտակ, կապուած է քաղաքին չըջկայքը գտնուող կրաքարի հանքերուն հետ: Բնակչութեան թիւն է 30.000:

ԿԻՐՈՎԱԿԱՆ

Մինչեւ 1935 թուական կը կոչուէր Ղարաքիլիսէ, — Սեւ եկեղեցի —: Հայաստանի երրորդ նշանաւոր քաղաքն է, Երեւանէն 145 քմ. հեռավորութեամբ: Ունի 170.000 բնակչութիւն: Կը գտնուի Հայաստանի Հիւսիսը Բամպակի եւ Բազումի լեռնաշղթաներու գոգավորման եւ Տանձուտ եւ Բամպակ գետերու միախառնման վայրին մէջ: Մովի մակերեսէն 1350 մ. բարձրութիւն ունի: Քաղաքի մէջէն կը հոսին Բամպակ, Տանձուտ եւ Վանաձոր գետերը: Ունի մեղմ եւ բարեխառն կլիմայ: Հարուստ է հնագիտական յուշարձան- ներով: Տանձուտ գետի աջ ափին գտնուած է վաղ պրոնզէ դարէն, եւ վաղ հայկական շրջանին վերաբերող բնակարաններ եւ այլ յուշարձաններ, որոնցմէ նշանաւոր են Թագաւորանիստը եւ Մաչտոցի բլուրը: Ունի դպրոցներ, հիւանդանոց- ներ, եկեղեցիներ, բուժարաններ, գործարաններ, մշակութային զանազան տուններ, գրադարաններ, թանգարաններ, մարզարաններ եւ այլն: Հայկական Եկեղեցիին կառուցուած է 1831-ին, 1928-ի երկրաշարժէն քանդուած եկեղեցւոյ վայրին վրայ: Նշանաւոր է Ղարաքիլիսէի Ճակատամարտը, 24-28 Մայիս 1918-ին, Հայկական եւ Թրքական զօրքերու միջեւ, որ կը հանդիսանայ Հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան կոհներէն մին:

Հայրենի ականաւոր բանաստեղծ՝ Ռազմիկ Դաւոյեան, գաւազը Մեծ Պարնիի՝ որ Դեկտ. 7-ի երկրաշարժի աղէտեայ շրջաններէն մին է, համապարփակ տեսիլով կ'ողջունէ Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստաններու, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Հայ ժողովուրդի միասնականութիւնը եւ ամբողջականութիւնը: Յուսով ենք որ իր «Թորոս Ռոսլին» գործին վերջին պատկերը՝ որ կ'աւարտի՝ Ռոսլինի տեսիլքով, հեղինակին քաղցր երազը իրականանայ՝ եւ յուսոյ դռներու բացուելուն, մեր երկրէն ընդմիջտ հեռանայ ցաւի, արցունքի ու սառապանքի ձմեռը:

«Ինձ առաջնորդ լեր, Տէր Ամենակալ», — ասաց Ռոսլինը եւ սուգուեց խաւարի մէջ:

Քարէ յատակին նրա փայտէ կօշիկների ոտ- նաձայները հնչեցին խորհրդաւոր ու ահարկու:

Ականատեսները վկայում են, որ առ այսօր էլ լաւում են այդ ոտնաձայները, որովհետեւ երկրի ընդերքով շարժում է Թորոս Ռոսլինը: Նրանց խօսքի ճշգրտութիւնը ստուգելու նպատակով, Կիլիկիայի պայծառ, կապոյտ երկնքի տակ, որտեղ ճերմակ թռչուններ ու ճերմակ ամպեր են սաւառնում, փարթամ խոտերի ու հրաշալի ծաղիկների գորգերով ծածկուած դաշտերում ու բլուրներին, Հայաստան աշխարհի տարբեր ծայրերում՝ Հոռովկայում, Սիւսում, Տարսնում, Սկեւոյում, Վասպուրական աշխարհում, Սասու- նում, Արազածի փեշերին, Արարատի ստորոտ- ներում, մեր գիւղ Մեծ Պարնիում... հրեշտակների նման երեխաներ, ականջները զգոյշ դրած հողին, անասնաման լուռութեան մէջ որսում է երկրի շնորհքով: Նա ներծնում է երկրի ընդերքի մէջ: Եւ նրա քայլերին ունկնդիր՝ հայ մանուկները եր- գում են՝ «Երբ որ բացուին դռներն յուսոյ, Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ ...»:

ՍՏԵՓԱՆԱԻԱՆ

Ստեփանաւան քաղաքը կը գտնուի Ձորագետի միջին հոսանքի աջ ափին, Կիրովական-Թիֆլիս ճանապարհին վրայ: Ստեփանաւանին ենթակայ են Արմանիս եւ Շագարդա գիւղերը: Ունի չափաւոր կլիմայ, խոնաւ: Ունի արդիւնաբեր գործարաններ, դպրոցներ, մշակութային տուններ, ճամբաներ եւ օրակայան:

LENINAKAN  
THE MOST ARMENIAN  
OF TOWNS

Սգակիր ժողովուրդ,

Մանր սուգի մէջ է հայ ազգը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Մանր սուգի մէջ է մեր Ս. եկեղեցին եւ Միածնաէջ տաճարը Ամենայն Հայոց: Դեկտ. 7-ի ահաւոր երկրաշարժը քարուքանդ է արել, մեծ մասամբ, Հենինականը, Կիրովականը, Ստեփանականը, մեր հայրենի շէն քաղաքները, եւ ամբողջապէս կործանել Սպիտակ քաղաքը եւ մտակայ գիւղերը:

Ողբում ենք բազում տասնեակ հազար մեռելներին եւ ծանր վիրավորներին, եւ աւելի քան 100,000 անօթեւան ժողովուրդի համար:

Աշխարհի պատմութեան ընթացքին քիչ անգամներ արձանագրուել են նման չար աղէտներ:

Մեր ժողովուրդին վիճակուել էր 1915-ի Յեղասպանութիւնը, եւ դեռ այս տարուան սկիզբին՝ Սոււգայիթեան ողբերգութիւնը, եւ հազարաւոր աղետներին եւ զաղթականների օգնութիւնը: Պիտի խնայուէր մեզի նոր աղէտ, մի նոր կոտորած, մի նոր տառապանք:

Սաղմոսերգուի նման աղաղակում ենք, «Տէր Աստուած, մինչեւ ե՞րբ պիտի մոռանաս մեզ, մինչեւ ե՞րբ քո երեսը պիտի դարձնես մեզանից: Աստուած մեր, նայիր մեզ, եւ լսիր մեզ եւ այս ամէնը, ով Տէր, մեր ո՞ր մեղքի համար, մեր ո՞ր մեղքի համար»:

Եթէ բոլոր մեր տառապանքներուն մէջ մի դադարներ կայ, մի խորհուրդ կայ թաքնուած, թող օրհնեալ լինի կամք Տեառն:

Այս Կիրակի, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, մենք պիտի կատարենք հանդիսաւոր հոգեհանգիստ եւ պիտի աղօթենք բազմահազար զոհեալների հոգիներին համար:

Սիրելի հարազատներ,

Ձեր դէմքերը դարձնէք դէպի մեր տազնապահար ժողովուրդը, դէպի մեր կործանուած քաղաքները, այո, վշտալից կերպով, սակայն ոչ յուսահատ, եւ ոչ պարտուած, այո, ոչ պարտուած:

Լոյս հաւատքով, անխորտակ ոգով, հուժկու բազուկներով, քաջութեամբ դիմաւորենք մեր

ճակատագիրը: Տոկանք փորձութեանց եւ յաղթութեամբ պսակենք լոյս միւտնով օծեալ ճակատը մեր ազգին:

Այսպիսի պահերին է որ ժողովուրդները կարող են ցոյց տալ իրենց առաքինի նկարագիրը, իրենց զոհաբերութեան ոյժը եւ իրաւ հայրենասիրութիւնը:

Վշտի եւ սուգի այս օրերուն, մենք նաեւ միխթարուած ենք եւ երախտապարտ որ Սովետական կեդրոնական կառավարութիւնը ամէն միջոց ի գործ կը դնէ օգնելու, ինչպէս նաեւ բոլոր եղբայր ազգութիւնները, որոնք, բոլորը մեր ժողովուրդի կողքին են կանգնած եւ օգնութեան են հասնում մեր տառապեալ ժողովուրդին:

Մենք հրաւեր ենք կարգում ձեր բոլորին, մնալ աներեր, եւ ամէն մէկը պատրաստ ձեր զոհաբերութեան բաժինը բերելու ձեր աղէտեալ եղբայրներուն եւ քոյրերուն:

Մենք նոյն կոչը ուղղել էինք, այս օրերին, նաեւ սփիւռքի հայոց եկեղեցիներին եւ ժողովուրդին՝ նոյն ապրումներով եւ սպասումներով:

Վկայում ենք, որ արտասահմանի ձեր ազգակիցները գործի են ձեռնարկած եղբայրական օգնութեան ձեռքը երկարելու հայրենի մեր ժողովուրդին:

Հաւատում ենք, որ ինչպէս անցեալում, յաճախ, նաեւ այս անգամ, «Ձախորդ օրերը կուզան ու կ'երթան»:

Շուտով կը բուժուին մեր վէրքերը, եւ մօտ ապագային կը վերաշինուին մեր կործանած քաղաքները, դէպի երկինք կը խոյանան մեր շէնքերը, առաւել շքեղ, առաւել պայծառ: Նորից կը հնչեն այնտեղ հայ երգն ու խօսքը, նորից կը տնքան մուրճերը հայ բանուորներին եւ նորից կը ծնուեն մեր երախտները հազար հազարով:

Լացի ու սուգի այս օրերին, հայեր միմեանց միխթարեցէք, սիրով միաբան, նոր լուսաբացի արդար տեսիլքով:

Նայեցէք մեր գոյատեւման գերագոյն խորհուրդը լերան՝ մեր Արարատին:

Ողջ եղէք, զօրացեալք Ս. Հոգւով, եւ յաւէտ օրհնեալ ի մէջն ամէն:

I come from Leninakan. Despite long absences and infrequent visits to my native city, I still believe it is the most interesting and the most Armenian of cities.

Leninakan dates from the tenth century. It rose and declined, rose and declined again, was pillaged and restored time after time. Its name then was Gumri. Its citizens were largely craftsmen, confident of themselves and loyal to their guild traditions. They were able, enterprising and independent people.

Independence, a robust humor, a sense of self-esteem and a passion for exaggeration are perhaps the Leninakanite's most typical characteristics.

Every third Leninakanite holds down a job, every fifth is a student and every tenth a cultural or educational worker. Favorite dishes — shashlyk, khach, tava, lyulya-kebab — are made with generous sprinkles of pepper, a condiment that calls for quantities of dry wine. The average Leninakanite drinks 1.5 quarts a day. Nevertheless, you see nobody reeling down the street. The average Leninakanite ... But since the average Leninakanite is only an abstraction, let us turn to real people.

The mayor of the city, Suren Matnishyan, is a former locomotive driver. For 25 years he ran locomotives, and for four years he has been running the city.

Leninakan is a city in construction. Three times it changed its name: first it was Gumri, then Aleksandropol and finally Leninakan, but otherwise it had changed very little until the forties.

Despite its colorful background, some 20 years ago Leninakan was a dusty provincial town with only one six-story building. When he visited Leninakan in 1924, Anatoli Lunacharsky, Soviet Minister of Culture, wrote: "the city has a strong resemblance to Pompeii: ruined buildings covered with grey dust as though with ashes. Under-population, stagnation, unemployment."

Today one of Leninakan's problems is a shortage of manpower. Though the population has grown — from 27,000 in 1924 to 150,000 in 1967 — industry has grown faster. Leninakan exports its products to 20 countries. It is Armenia's production center for consumer goods, among other things.

In the last year and a half the city has built big factories for electrical equipment, refrigerators, midget engines, instruments and cans for the meat industry.

Leninakan is growing at an explosive rate. Like an adolescent, the city outgrows its clothes almost as soon as they are bought.

In recent years more than 7,000 Armenians, repatriated from Syria, Lebanon and France, have settled in Leninakan. Each of them was greeted with the key to a new apartment and a speech of welcome by Suren Matnishyan: about Leninakan, naturally, its new blocks of houses, its parks (one of the local jokes is that 20 years ago Leninakan had only two trees, and they were locked away at night for fear they might be stolen), its schools, colleges, its famous people. Writer Avetik Isaakyan, the brothers Tigranyan, composers, the scientist Koshtoyan, the artist Rukyan, the poet Shiraz — a good half of Armenia's great people seem to have been born in Leninakan.

They say the local air has something to do with the development of such talent.



Citizens of Leninakan seen watching the excavation works at the ruins of their houses.

ենք, մէկ ժողովուրդ ենք, մէկ հանրապետութիւն ենք, մէկ անցեալ ունինք, մէկ ապագայի կը նայինք:

Յաջողութիւն, յարատեւութիւն, համբերութիւն, քաջութիւն եւ յաղթանակը եւ պայծառ գալիքը մերն է:

Վշտագին Սիրով,  
Մերոպ Արք. Աշնեան

SECONDS OF DESTRUCTION ...  
DECADES OF REHABILITATION

(Cont. from page 1)

of 70,000 dead; 400,000 homeless. But, privately, officials acknowledge that the death toll could reach 100,000 and beyond.

The town which were most affected were Leninakan, Kirovakan, and Spitak. Also affected were Gurgak, Stepanavan and Dzhadzhur. All are in the northwest corner of Armenia, near the Turkish border. The area was already over-burdened with 120,000 refugees who had fled from Azerbaijan in order to escape ethnic strife. The rural town of Spitak with a population of 30,000 was totally destroyed. Leninakan, Armenia's 2nd largest city with a population of 228,000 was 75% destroyed. Kirovakan, the 3rd largest city, with a population of 170,000 was more than 50% destroyed.

As if to heighten the international concern, the earthquake occurred during Mikhail Gorbachev's visit to the United States. Mr. Gorbachev cut short his triumphant visit and returned to the Soviet Union when the magnitude of the calamity became apparent. "Urgent measures are being taken to help all those affected by this terrible tragedy, and I have to be there in this effort," the Soviet leader said in his farewell remarks at Kennedy International Airport. Before flying to Moscow, Mr. Gorbachev spoke by telephone with President Reagan and President-elect Bush, who called to offer condolences and American assistance.

From all indications the immediate needs are being met by Soviet authorities and by an unprecedented outpouring of world-wide relief efforts. Teams of doctors and nurses have reached Yerevan.

Aside from major fundraising on our part, our job must be to keep this tragedy in the public view for as long as possible in order to solicit monetary and technical assistance worldwide. The needs of Armenia transcend the capability of Armenians alone. These needs will continue, not for year, but for decades. Solicit help from your friends, your neighbors, your business associates. Money is the most valuable at the moment because it can be used to purchase whatever is needed at the closest points in order to facilitate transportation.

Armenia will be rebuilt. It will be rebuilt stronger. It will be rebuilt with the proper construction methods to withstand future earthquakes. During this holiday season, a season of over-abundance and conspicuous consumption, remember Armenia with your gift for the future. Urge everyone to contribute generously to any of the agencies listed elsewhere in this issue.

The road to recovery is long and difficult. We can make it easier.

ՍՐՏԻ ԽՕՍՔ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

(Շար. էջ 1-էն)

Համամլուն փոխելու եւ զայն կոչելու Սպիտակ անունով: Ի՞նչ անուշ անուն, ի՞նչ անուշ քաղաք, հիմա հողին տակն է: Բայց գիտեմ որ Սպիտակ քաղաքը նորէն պիտի բարձրանայ եւ քաղաքին մէջտեղ պիտի գետեղէք աղանի մը, գեղեցիկ սպիտակ աղանի մը իբրեւ խորհրդանիշը վերածնունդի:

Սիրելի հարազատներ, մենք ձեզի հետ ենք, ամերիկահայերը ձեզի հետ են. աշխարհի ամբողջ հայութիւնը ձեզի հետ է, ձեր ցաւին մասնակից ենք, ձեր արցունքին հետ մեր արցունքը կայ եւ վստահ եղէք որ արցունքը եւ ցաւը կիսուելով կը թեթեւանայ: Եթէ այդպէս է, թող կիսուի մեր ցաւը, թող կիսուի մեր արցունքը, թող կիսուի մեր տառապանքը, եւ մենք վերստին միասին նայինք պայծառ ապագային:

«Հայաստան, Երկիր Դրախտավայր», երգած էր բանաստեղծը: Դարձեալ եւ միշտ մեր դրախտավայրն է Հայաստանը. թող փոթորիկներ անցնին, թող աղէտներ զան ու անցնին, բայց Հայր կայ ու կը մնայ: Հայկ նահապետ, աշխարհի բոլոր վայրերէն՝ այդտեղ ընտրած էր իբրեւ Հայոց աշխարհ: Այնտեղ է մեր Արարատը եւ մենք աշխարհի մէջ ուրիշ ոչինչի հետ չենք փոխեր մեր Արարատը, ուրիշի հետ չենք փոխեր մեր հայրենիքը եւ մեր բոլորին աչքերը կը նային դէպի յաւերժական Արարատին ու Արարատին դիմաց, դէպի Արագած ուր կը բոցկլտայ հովերուն, ամպերուն անձրեւներուն, հրդեհներուն, երկրաշարժներուն մէջէն, Լուսաւորչի կանթեղը:

«Ով անմեղ է, լիքը սիրով  
Ու հաւատով անսասան՝  
Ով նայում է վառ յոյսերով  
Դէպի հայոց ապագան՝  
Նա կը տեսնի էն մշտավառ  
Ձահը կախուած երկնքից  
Ասես՝ Աստուծ աչքը պայծառ,  
Հսկում է ցած՝ երկնքից:»

Յիշեցէք Յովհաննէս Թումանեանի անմահ բանաստեղծութիւնը եւ այն լոյսին նայելով վստահ եղէք որ պիտի վերաշինուի ու պայծառանայ մեր շքեղ Հայաստանը:

Ողջո՛յն, սէ՛ր, բարեկամութիւն ձեզի սիրելի հարազատներ, քաջ եղէք, կորովի եղէք, եւ մենք իբրեւ ձեր հարազատ քոյրերն ու եղբայրները, պիտի ձեզի հետ ըլլանք եւ մեր նիւթական եւ բարոյական բոլոր միջոցներով օժանդակենք ձեզի: Մենք ձեզի չէ որ կ'օժանդակենք, այլ մենք մեզի է որ կ'օժանդակենք որովհետեւ մենք մէկ հայրենիք



ASSOCIATED PRESS.

**100,000 DEAD  
IN ARMENIA.  
500,000 HOMELESS.  
12,000 INJURED.  
PLEASE HELP.**

We cannot replace their loved ones. We cannot restore their lives. But our contributions can help them begin to rebuild. By providing the injured with medical assistance and supplies. By providing the homeless with food, shelter and clothing.

Please give generously.

Make checks payable to Armenian Earthquake Relief Fund at the Armenian Prelacy, 138 East 39 Street, New York, N.Y. 10016. Or call 1-800-999-0353 to make credit card donations. For other information, call 1-800-ARARAT-1.